Ոռոգման ջրի մատակարարման
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N_____

ՀՀ Արմավիրի մարզ գ. Հովտամեջ «01» 06 2018 թ.

«Էջմիածին» Ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն՝ **Սուրիկ Սեդրակյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Ընկերության սպասարկման փուրակաբաք ենթատարածքի ջրօգտագործող «Գայլ Հերոս» ՍՊԸ-ի դեմս

, (այսուհետ՝ Ջրօգտագործող), մյուս կողմից, ղեկավարվելով «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և Ընկերության կառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Ընկերությունը պարտավորվում է ոռոգման ջրի առկայության դեպքում Ջրօգտագործողին մատակարարել տեխնիկական պայմաններին համապատասխան ոռոգման ջուր, իսկ Ջրօգտագործողը պարտավորվում է ընդունել այն և վճարել դրա համար:

1.2. Յուրաքանչյուր ոռոգման շրջանի համար նախատեսված ոռոգման ջուրը Ջրօգտագործողին է մատակարարվում Ջրօգտագործողի կողմից Ընկերությանը տրված ոռոգման ջրի պահանջարկի հայտի (այսուհետ՝ Հայտ) հիման վրա, որը ներկայացվում է մինչև ոռոգման շրջանի սկիզբը: Ընկերության կողմից հայտը հաստատվելուց հետո այն դառնում է պայմանագրի անբաժանելի մասը (Հավելված № 1):

2. Ոռոգման ջրի մատակարարման պայմանները

2.1. Հայտում սահմանված ջրի քանակը կարող է փոփոխվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

2.2. Յուրաքանչյուր ջրման և այդ ջրման համար պահանջվող ոռոգման ջրի քանակը նախատեսվում է Ջրօգտագործողի կողմից Ընկերությանը ներկայացրած ջրման հայտով (այսուհետ՝ Ջրման հայտ): Ջրօգտագործողը Ջրման հայտը Ընկերությանն է ներկայացնում ջրման հայտով նախատեսված ջրման օրից առնվազն 4 օր առաջ:

2.3. Ջրման հայտը Ընկերության կողմից ընդունված և հաստատված է համարվում Ջրօգտագործողին ջրման ժամանակի (օրը և ժամը) տեղեկացնելու պահից:

2.4. Ջրման հայտերում նշված ոռոգման ջրի քանակի հանրագումարը չպետք է ավել լինի Հայտում նշված ոռոգման ջրի ընդհանուր քանակից:

2.5. Ոռոգման ջրի մատակարարման անհնարինության դեպքում, (ջրաղբյուրում համապատասխան քանակությամբ ջրի բացակայություն) Մատակարար ընկերությունը պատասխանատվություն չի կրում չմատակարարված ոռոգման ջրի հետևանքով ջրօգտագործողին պատճառված վնասների համար:

3. Ոռոգման ջրի հանձնում-ընդունումը

3.1. Ընկերությունը Ոռոգման ջուրը Ջրօգտագործողին է հանձնում Ջրօգտագործողի հողի գլխամասում:

3.2. Ոռոգման ջուրը Ջրօգտագործողին մատակարարված է համարվում փաստացի ստացած ոռոգման ջուրը ընդունելու մասին ոռոգման ջրի բաշխման մատյանում կամ փաստացի ոռոգման ջրի քանակի և վճարման չափի անդորրագրում Ջրօգտագործողի կամ Պայմանագրի սույն կետում նշված անձանց կողմից ստորագրման պահից:

_____

(Ա.Ա.Հ.)

_____

(Ա.Ա.Հ.)

3.3. Ջրօգտագործողը հավաստում է, որ Պայմանագրի 3.2 կետում նշված անձիք իրավունք ունեն հանդես գալ իր անունից, այդ թվում ստորագրելու ոռոգման ջրի մատակարարման և ընդունման հետ կապված բոլոր փաստաթղթերը:

3.4. Պայմանագրի 3.2 կետում նշված անձանցից բացի այլ անձ իրավունք ունի Ջրօգտագործողի անունից հանդես գալ և ստորագրել Ընկերությանը Ջրօգտագործողի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

4. Մատակարարված ջրի դիմաց կատարվող վճարները

4.1. Մատակարարված ոռոգման ջուրը հաշվառվում է խորհանարդ մետրերով:

4.2. Ջրօգտագործողը վճարում է փաստացի ստացած ոռոգման ջրի համար:

4.3. Մեկ խորհանարդ մետր ոռոգման ջրի վճարի չափը սահմանում է Ընկերության ընդհանուր (ներկայացուցիչների) ժողովը:

5. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

5.1. Ընկերությունն իրավունք ունի՝

5.1.1. Պայմանագրով նախատեսված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում Ջրօգտագործողի նկատմամբ կիրառել Պայմանագրով նախատեսված պատժամիջոցները:

5.1.2. Ջրօգտագործողի կողմից իր հերթի խախտումով կամ հայտով չնախատեսված (ջրագողության) ճանապարհով ոռոգման ջրի օգտագործման դեպքում Ջրօգտագործողի մասնակցությամբ, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ առանց նրա, կազմել համապատասխան ակտ՝ օրենքով սահմանված կարգով նրան պատասխանատվության ենթարկելու համար:

5.1.3. Պահանջել Ջրօգտագործողից իրեն պատկանող հողամասի օգտագործման իրավունքը ոչ ավելի քան երեք տարի ժամկետով փոխանցել Ընկերությանը, եթե տվյալ տարվա ոռոգման սեզոնի ավարտից հետո՝ 6 ամսվա ընթացքում Ջրօգտագործողը չի վճարել ստացած ոռոգման ջրի համար:

5.1.4. Դատական կարգով գանձել Ջրօգտագործողի կողմից չվճարված ջրի վճարները: Այս դեպքում պարտքի գումարին կարող են հաշվարկվել տոկոսներ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև հայցադիմումը դատարան ներկայացնելու օրը, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

5.2 Ջրօգտագործողն իրավունք ունի՝

5.2.1 Ստանալ Հայտով նախատեսված ոռոգման ջրի ամբողջ ծավալը:

5.2.2 Պահանջել ջրաչափություն իր հողակտորի գլխամասում՝ ջրաչափական սարքավորումների միջոցով, որի մասին անհրաժեշտ է նախօրոք (ջրումից առնվազն 2 օր առաջ) գրավոր դիմել Ընկերությանը:

5.3 Ընկերությունը պարտավորվում է՝

5.3.1 Ջրօգտագործողին ոռոգման ջուրը մատակարարել Հայտով նախատեսված քանակով՝ Պայմանագրի պայմաններին համապատասխան:

5.3.2 Ջրօգտագործողին Ջրման հայտով պահանջված ջրաքանակից պակաս տրված ջրի ծավալը հնարավորության դեպքում մատակարարել հաջորդող տասնօրյա ժամկետում:

5.4 Ջրօգտագործողը պարտավորվում է՝

5.4.1 Սպասարկել անմիջականորեն իր հողակտորին մոտեցնող ջրատարի հատվածը՝ _____

_____

5.4.2 Ընկերության հետ համաձայնեցված ժամկետում՝ իր հողակտորի գլխամասում ստանալ ոռոգման ջուր:

5.4.3 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

5.4.4 Մատակարարված ջրի դիմաց վճարումները կատարել բանկի կամ փոստային ծառայության միջոցով:

5.4.5 Իր սեփականությունը հանդիսացող հողատարածքը վաճառելու (կամ այլ ձևով օտարելու, որը հանգեցնում է հողատարածքի սեփականատիրոջ փոփոխության) դեպքում դիմել Ընկերությանը վերջնահաշվարկ կատարելու, պայմանագիրը լուծելու և հողատարածքի ջրամատակարարումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ Ընկերությունը տեղեկանք է տալիս Ջրօգտագործողին:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, երաշտը, սակավաջրությունը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7. Վեճերի լուծման կարգը

7.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8. Այլ պայմաններ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է 5 արի ժամկետով:

8.2. Պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր:

8.3. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հիմքերը որոշվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4. Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարացված նույն ժամկետով, եթե Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ կողմերից որևէ մեկը մյուսին չի դիմել այն դադարեցնելու համար:

Ընկերություն	Ջրօգտագործող
«Էջմիածին» ՋՕԸ	«Գայ-Հեյոմ» փ.Հ.Հ.
անվանում	գ. Երևան, Ծոմ. Թաղամաս 4թ., 50/12
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Հովտամեջ, Տերյան փ. 11	Հ.Ա.Հ. 01804548
հասցե	
ՀՎՀՀ - 04427961	
«Կոնվերսբանկ» ՓԲԸ Էջմիածին մ/ճ	հ/հ 1500682358300
Հ /հ - 1930067564180100	«Գայ և Բաբել» ՓԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ Էջմիածին մ/ճ	Հեռ. 21-30
Հ /հ - 2475907045050000	
Գործադիր տնօրեն Ս.Մեղրակյան	
ստորագրություն	ստորագրություն

Կ.Տ.

Հավելված №1 «01» 06 2018 թ. N պայմանագրի

«Էջմիածին» ՋՕ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Ս.Սեդրակյանի, մյուս կողմից ...գրասենյակ... համայնքի ջրօգտագործողը՝

ի դեմս ...«Գայ Հերոս» գր. Բ.Ա. ..... կազմեցին պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող սույն հավելվածը հետևյալի մասին.

(Ա.Ա.Հ.)

Ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի հողատարածքները և պահանջվող ոռոգման ջրի քանակը.

Համակարգի անվ. բաժ. համարը (անվանումը)	Հողի սեփականատիրոջ անվանումը	Հողի կոդը	Ոռոգելի հող. կադաստր	Ընդամենը		այդ թվում															
				Ոռոգելի հող. փաստացի	ջուր	Հացահատիկ		Բանջար-բոստան		Պտղատու այգի		Տնամերձ		Խաղողի այգի		Բազմամյա խոտ		Կարտոֆիլ	
			հա	հա	հազ.մ³	հա	հազ.մ³	հա	հազ.մ	հա	հազ.մ	հա	հազ.մ	հա	հազ.մ	հա	հազ.մ	հա	հազ.մ
W 447	Ընդամենը			0,65						0,65									

«Էջմիածին» ՋՕԸ: ՀՀ Կառավարության կողմից սահմանված է 1խմ ոռոգման ջրի սակագինը 11 դրամ: Ջրօգտագործող՝

Կ.Տ. ..... Ս.Սեդրակյան .....

(ստորագրությունը ԱԱՀ) (ստորագրությունը ԱԱՀ)